կան եւ վիմագրագիտական հետազօտութիւններ, Եր., 2009)՝ «Արցախի կենտրոնական եւ Սիւնիքի հիւսիս-արեւելեան գաւառները ըստ «Աշխարհացոյց»-ի» ներդիր քարտէզում, որտեղ ոչ միայն Խաղարավանքը, այլեւ նրանից արեւելք գտնուող Բերդաձորի Ս. Գրիգոր վանքը շտապողաբար ցոյց ենք տուել Հարջլանք գաւառի կազմում: Տեղին նշենք նաեւ գրքում շօշափուած մէկ այլ խնդրում սրբագրում կատարելու անհրաժեշտութիւնը: Հետեւելով նախորդ ուսումնասիրողներին՝ մի դրուագում կրկնել էինք այն մտայնութիւնը, թէ ԺԳ դ. սկզբներին Տրտուի միջնահովտի աջափնեայ (հարաւային) մասը մինչեւ Արծաթահանքի լեռնաշղթան՝ աւելի մեծ հաւանականութեամբ եղել է ոչ թէ Ներքին Խաչէնի, այլ Վերին Խաչէնի կամ Վախտանգ Հաթերքցու իշխանութեան տարածքում (էջ 247, ծնթ. 85): Սակայն ներկայումս աղբիւրագիտական նիւթը հիմք է տալիս՝ պնդելու հակառակը: Օրինակ՝ Տրտուի աջափնեայ ձորալանջի Կճողուտ գիւղից վեր գտնուող Ամենափրկիչ եկեղեցու մուտքի ճակատաքարի վիմագրում ունենք, առաւել մեծ հաւանականութեամբ, Վախտանգ Տանգիկի *յիշատակումը. «Ի հայրապետութե՞ն տ՝ր Յակոբոսայ եւ յիշխանութե՞ն* Վախտանգայ, *որդոյ* Հասանայ, *ես՝ Յոհանէս ու Սերոբ ու Սարգիս ու Գրիգոր որդի Հարբածայրայ շինեցաք զԱ՞ստուածածինս ի մեր հայրենե[ա]ցս...»*[202]: *Նոյնն է մի քանի կմ արեւմուտք ընկած Վաղուհաս գիւղի՝ «Մայրաքաղաք» կոչուած եկեղեցու բակի խաչքարի (ներկայումս՝ կորած) վիմագրում. «Ես՝ Յոհան դրան* Էրէցս Վախտանկայ *կանգնեցի զխաչս... Թիվն :ՈԿԲ: էր* [=1213 թ.]»[203]: *Այս եկեղեցու գաւթի խորանի ճակատին եղել է Կոստանդին Բարձրաբերդցի Հայոց կաթողիկոսի (1221-1267) անունից գրուած ուշագրաւ վիմագիրը (ներկայումս՝ կորած), որում նա, մասնաւորապէս, նշում էր. «...միաբանեցայ եպիսկոպոսարանիս ի ձեռն հոգեւոր որդւոյ իմոյ տէր Մարգարէին,* յիշխանութեան Մեծի Ջալալ Դաւլին *եւ յառաջնորդութեան սորայ տեառն Ներսիսի Աղուանից կաթուղիկոսի... Ի թվիս :ՈՂԵ: էր* [=1246 թ.]»[204]:

* * *

Կիրակոս Գանձակեցու վկայութեամբ՝ Խօխանաբերդը հիմնայատակ աւերուել է մոնղոլների կողմից դեռեւս Ջալալ Դօլա Հասան իշխանի կենդանութեան օրօք, եւ գրականութեան մէջ աւանդաբար ընդունուած է թուագրել դա մօտաւորապէս 1246-1247 թթ.[205]: *Ըստ պատմիչի տեղեկութեան՝ հարկահան Բուղայի գլխաւորած մոնղոլական զօրախումբը «քակեաց զանմարտնչելի բերդս նորա* [իմա՛ *Հասան Ջալալի*], *զոր* Խոյախանայ բերդ *կոչէին, ըստ պարսկական բարբառոյն, եւ զԴեղն, եւ զԾիրանաքարն, եւ զայլ ամրոցս նորուն: Եւ այնպէս յատակեաց զնոսա, մինչեւ հետք անգամ ոչ երեւէին, թէ բնաւ չէն լեալ իցէ»*[206]: *Սակայն այս դէպքի աւանդական թուագրութեանը հակասում է մի*

202 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 91 (N 278): Որոշ տառերի ընթերցումները ժամանակին ճշտել ենք տեղում:

203 Նոյն տեղում, էջ 114 (N 380): Ս. Բարխուդարեանը շտապողաբար ընդունել է թուականի՝ Սարգիս Ջալալեանցի՝ ընթերցումը (*:ՈԿԷ:* =1218 թ.)՝ խոտանելով Մակար Բարխուդարեանցինը (*Արցախ*, էջ 192), որն աւելի իրական է երեւում: Տեղին հմմտ. Վախտանգ Տանգիկի որդու դրան երէցի 7 տողանոց տապանագիրը Կոթի գերեզմանատանը. «Թվի՝ :ԶԶ: *[=1257 թ.]*: Այս է հանգիստ Յոհանիսի՝ դրան երէցոյ Ջալալին...» (*Դիւան հայ վիմագրութեան*, պր. IV, *Գեղարքունիք*, էջ 280, N 1186):

204 **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Արցախ*, էջ 192. *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 114 (N 377):

205 Տե՛ս, օր.՝ **И. Орбели**, *hАсан Джалал, князь Хаченский*, էջ 154; **Բ. Ա. Ուլուբաբեան**, *Խաչէնի իշխանութիւնը*, էջ 195-196:

206 **Կիրակոս Գանձակեցի**, *Պատմութիւն Հայոց*, գլ. ԽԴ, էջ 313 (գլխի վերնագիրն է. «Վասն հարկահանացն, որ եկին ի ղանէն», էջ 312):